ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

25.12.2015թ.
ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 94 անդամներ, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչ Հ. Օհանյանը,, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ՋՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2015 թվականի գյուղատնտեսական տարվա արդյունքների ամփոփման մասին:

/ Զեկ. գյուղ. և բնապահպանության
վարչության պետ՝ Հ. Տերտերյան/

2. 2016 թվականին մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության աշխատանքային ծրագրի մասին:

/ Զեկ. ՏԻ և ՀԳՄ հարցերով
վարչության պետ՝ Ա. Լալայան/

3. Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վարչական հսկողության և ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների մասին:

/ Զեկ. քաղաքաշինության
վարչության պետ՝ Լ. Խաչատրյան/

4. Մարզի համայնքների 2015 թվականի տասնմեկ ամիսների բյուջեների կատարման մասին:

/Զեկ. ֆին. և սոցիալ-տնտես. զարգ.
վարչության պետ՝ Գ.Եղիազարյան/

1. **Լսեցին՝**

2015 թվականի գյուղատնտեսական տարվա արդյունքների ամփոփման մասին գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց ՝ մարզպետ Ռ. Աբրահամյանը :

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանին '

- ՋՕԸ-երի հետ համատեղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները ՝ 2016 թվականի գյուղատնտեսական տարվա նախապատրաստական աշխատանքները ժամանակին ավարտելու համար:

2. **Լսեցին՝**

2016 թվականին մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության աշխատանքային ծրագրի մասին ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց ՝ Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը :

Հանձնարարվեց

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանին '

- 2016 թվականի ընթացքում , համաձայն կազմված աշխատանքային ծրագրի ՝ լրջորեն ուսումնասիրել համայնքների ղեկավարների սեփական և պետության պատվիրակած լիազորությունների ու համայնքի ավագանիների լիազորությունների իրականացումը:

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ 2015թվականի ընթացքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունները և բացթողումները սահմանված ժամկետներում վերացնելու, ինչպես նաև հետագայում դրանք բացառելու ուղղությամբ:

3.**Լսեցին՝**

Քաղաքաշինության բնագավառում համայնքների ղեկավարների գործունեության նկատմամբ վարչական հսկողության և ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված

միջոցներով իրականացված շինարարական աշխատանքների մասին քաղաքաշինության վարչության պետ Լ. Խաչատրյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը, համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ա. Վարդանյանին

● քաղաքաշինական տեսչության հետ քննարկել համայնքներում կառուցված անշարժ գույքի գրանցման, սեփականության վկայականների տրամադրման գործընթացի դյուրացման հարցը և ներկայացնել տեղեկատվություն,

մարզպետի տեղակալ Ա. Մուրադյանին

● քննարկել ու ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացնելու նպատակով նախապատրաստել միջնորդագիր՝ << Հյուսիս- հարավ >> ավտոմայրուղու կառուցման ընթացքում՝ ըստ անհրաժեշտության, կամուրջների կառուցման ու անցումների նախատեսման համար,

քաղաքաշինության վարչության պետ Լ. Խաչատրյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին՝

● ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ՀՀ պետական բյուջեով մարզին հատկացված միջոցներով իրականացվող շինարարական աշխատանքները մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ն ավարտելու համար :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

● հետևողական լինել համայնքներում իրականացվող շինարարական աշխատանքների որակին և սահմանված ժամկետներում դրանք ավարտելուն :

4.Լսեցին՝

Մարզի համայնքների 2015 թվականի տասնմեկ ամիսների բյուջեների կատարման մասին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Հանձնարարվեց

մարզպետի տեղակալ Ի. Շադյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանին՝

● համապատասխան աջակցություն ցուցաբերել հարկերի հավաքագրման ցածր ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարներին՝ մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը գումարների հավաքագրման ցուցանիշները բարձրացնելու նպատակով :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

● ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ըստ հարկատեսակների վարձավճարների գանձման և հավաքագրման ցածր ցուցանիշները բարձրացնելու ուղղությամբ:

Մարզխորհրդի նիստն ամփոփեց Արարատի մարզպետ Ռ. Աբրահամյանը և մարզխորհրդի մասնակիցներին շնորհավորեց գալիք տոների կապակցությամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ